ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, Դավիթ-Բեիկ 2
098435745, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13 -ի հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը:

1.ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ N35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2017 ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

3.ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

4. ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

5 .ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ Կողմ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ Կողմ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ N35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2017 ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով,<<Իրավական ակտերիմասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 16.01.2017 թ. Թիվ 01/16.1/113-17 գրությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Ուժը կորցրած ճանաչել Նարեկ համայնքի ավագանու 17 նոյեմբերի 2016 թվականի <<Նարեկ համայնքի 2017թ. տեղական տուրքեր և վճարների դրույքաչափերի հաստատման մասին>> N 35-Ն որոշումը:

2.Հաստատել Նարեկ համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետ աշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար

ա. շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 1000-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝100000 դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:
2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման , վերականգման, ուժեղացման , արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության հմար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով
ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝3000 դրամ:
3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝5000 դրամ:
4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝ 200000 դրամ
5) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներիրև (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյանկի համար՝
- մինչև 26 քառակուսիմետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,
6) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝
բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
7)Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևանքաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
գ) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.
դ) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.
ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածելէ իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը չափով

8) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը(զինանշան,անվանում և այլն) ,որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության ,աշխատանքների կատարման ,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ 100000 դրամ:

1-8 ենթակետերի դրույքաչափերը կիրառել 0,5 գործակցով:

9. Աճուրդների և մրցույթների մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

10.Մրցույթների և օտարումների համար քայլի չափը սահմանել ՝5000 ՀՀ դրամ:

11.Համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ շնչի համար աղբահանության վճար սահմանել 100 դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, Դավիթ-Բեկի 2
098435745, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2016Թ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 18-րդհոդվածի 5-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով՝

Նարեկ համայնքի ավագանին որոշեց
Ի գիտություն ընդունել Նարեկ համայնքի 2016թ. բյուջեի չորրորդ եռամսյակի մասին հաղորդումը՝արդյունքները գնահատելով լավ.
1. Հողի հարկ- 100,01%
2. Գույքահարկ - 105.17%
3. Տեղական տուրք - 100,00%
4. Գույքի վարձակալությունից եկամուտներ - 100,82%
5. Աղբահանություն - 100,01%
6.Ոչ հարկային եկամուտներ – 100,16%:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, Դավիթ-Բեկի 2
098435745, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

ՀԱՍՏԱՏԵԼ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2 -րդ կետով.

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նարեկ համայնքի 2017թվականի բյուջեն՝ եկամտային և ծախսային մասերը համապատասխան հոդվածներով:

Նարեկ համայնքի 2017թ. վարչական բյուջեի եկամուտները.

Ընդամենը եկամուտներ- 37307,3

1. Հարկեր և տուրքեր - 11400,0
1.1 Հողի հարկ, այդ թվում - 8000,0
Ֆիզիկական անձանցից- - 8000,0
1.2 Գույքահարկ փոխադրամիջ. - 3400,0
1.3 Ապրանք. օգտագ. և իրացման թույլտվ. համար, այդ թվում
Տեղական տուրքեր, որից – 144,000
Ծխախոտի վաճառքի թույլտվութ. - 72,0
Խմիչքի իրացման համար - 72,0
2. Պաշտոնական դրամաշն.այդ թվում – 19063,3
Դոտացիա - 19063,3
3. Այլ եկամուտներ, այդ թվում - 6700,0
3.1Հողի վարձակալութ. - 2500,0
3.2 Տեղական վճարներ /խմ.ջուր,մատծառ./- 3000,0
3.3 Աղբահանություն – 1200,0

Նարեկ համայնքի 2017թ. վարչական բյուջեի ծախսերը

Կառավարման մարմնի պահպանումգործառնական դասակարգում- 01.01.01.51
Հոդված 4111 - աշխատավարձ – 11959,873
4212 - էլ. էներգիա, գազ - 350,0
4214 - ինտերնետ, բջջ. - 250,0
4234 - տեղեկատ. - 20,0

4241 - գազի կետի սպաս. – 48,0
4261 - գրենակ. - 250,0
4264 - վառել. ավտոպահ. և քսայուղ. - 700,0
4269 - հատուկ նպատակ. նյութեր - 250,0
4215 - ապպա - 26,0
4823 - տեխասմ. - 14,0
4232 - համակարգչ. ծառայութ. - 97,0
Ընդամենը՝ 13964,873
Նախադպ. ուսուց. գործառնական դասակարգում 09.01.01.51
4239 - մանկ. հատկ – 14098,427
Ջրային կառ. շահագ. և պահպ. գործ. դասակ. 06.06.01.55
4269 - հատուկ նպատ. նյութ. - 500,0
4823 - պարտադ. վճար - 94,0
Նպաստներ գործ. դաս. 10.07.01.54

4729 - նպաստ - 2300,0
4726 - թաղման ծախս - 100,0
Արտաք. լուսավ. ցանցի շահագ. և պահպ. գործ. դաս. 06.04.01.52
4212 - էլ. էներգիա - 400,0
4269 - հատուկ նպատակ. նյութ. - 300,0
Սանիտարակ. մաքրում գործ. դաս. - 05.01.01.51
4264 - տրանսպ. նյութ. – 1550,0
4213 – այլ ծառայութ. - 1000,0
Պահուստային միջոցն. գործ. դաս. 11.01.02.51
4891 - պահուստ. միջ. - 2000,0
Մշակութային միջոցառումներ
4269 - մշակ. միջոցառ. - 1000,0
Ընդամենը ծախսեր՝ 37307,3
Ֆոնդային բյուջեի եկամտային մաս – 6004,827
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ - 258,441
Հողի օտարումից մուտք - 4500,0
Պետությունից հատկացվող սուբվենցիա
Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ – 1246,386
5112 - Գերեզման.ոռոգման ջրագծի կառուցում – 500,0
5121- Տրանսպորտի ձեռքբերում- 4500,0
5113- Փողոցների խճապատում- 1004,827

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ Կողմ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ Կողմ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ,Դավիթ-Բեկի 2
098435745, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 1 հունիսի 2010 թվականի N186-Ն հրամանը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Նարեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող 03-063-0117-0019 ծածկագիրը կրող 0,21845 հա IV կարգի ջրովի վարելահող հողամասը ճանաչել որպես Նարեկ համայնքի համայնքային սեփականություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ Կողմ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ Կողմ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ